# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 83-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1 ՄԻԱՎՈՐ ԽՈՏԻ ՄԱՄԼԻՉԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ <<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ և ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՍԱԿԱԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 1 միավոր խոտի մամլիչը անհատույց օգտագործման իրավունքով փոխանցել «Արենի» ՀՈԱԿ-ին:

2. Սահմանել տեխնիկան վարձակալությամբ տրամադրելու սակագինը՝ 7 000 ՀՀ դրամ՝ մեկ օրվա համար:

3. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին տեխնիկան վարձակալությամբ հատկացնելու և ընդունելու նպատակով ստեղծել մշտական հանձնաժողով, որի կազմում պարտադիր ներառել ավագանու առնվազն 3 անդամ:

4. Սահմանել որ վարձակալությամբ տրամադրված գույքի սպասարկման և պահպանման ծախսերը կատարում է գույքի վարձակալը:

Կողմ -8　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԷ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ